# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ

հրատարակվում է 1994 թ.

գինը՝ 150 դրամ

100/4196/ 31 մայիսի 2012 հինգշաբթի

ISSN 1829-2224



Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am


Ա

## Ինչ սպասենք նոր ԱԺ-ից

Ի հեճուկս հոռետեսական եւ «անկումային» տրամադրությունների՝ պիտի ասեմ, որ 5-րդ գումարման Ազգային ժողովը, որն այսօր սկսում է իր աշխատանքը, բաղկացած է պատգամավորներից, որոնց կեսից ավելին ունակ է օրենսդիր աշխատանքի: Այսպիսիք են ՀԱԿ-ի (7 հոգի), ՕԵԿ-ի (6), ՀՅԴ-ի (5), «Ժառանգության» (5) խմբակցություններն ամբողջությամբ, անկախ պատգամավորները (2)՝ գումարած ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի կեսից մի քիչ պակասը (համապատասխանաբար՝ մոտավորապես 30 եւ 20 հոգի): Ստացվում է 75 հոգի՝ անցած խորհրդարանում մտածող, կարդացող եւ օրենքների բովանդակությամբ շահագրգռված պատգամավորներն ավելի շատ չէին: Մնացածը, այո, «գործարար» ճահիճ է, որի ներկայացուցիչները ոչ միայն ընդունակ չեն որեւէ մտավոր աշխատանքի, այլեւ չեն կարող ընդդիմադիր լինել, որովհետեւ այդ դեպքում իսկույն «բերման կենթարկվեն» հարկային դաշտ, իսկ ամբողջությամբ այդ դաշտում չի կարող աշխատել Հայաստանի ոչ մի մասնավոր ընկերություն: Բայց հույսեր տածել, որ այս գումարման Ազգային ժողովը օրենքներ կընդունի, որոնց շնորհիվ ձեռնարկատերերը ստիպված չեն լինի աշխատել ստվերում կամ «կիսաստվերում»՝ նման լավատեսության հիմք չկա: Որովհետեւ ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի «կարդացողներն» ու «մտածողները» պատգամավոր են դարձել չկարդացողների եւ չմտածողների փողերի շնորհիվ, իսկ վերջիններս ամենեւին էլ շահագրգռված չեն բանական հարկային օրենքների մեջ:

Այնպես որ՝ տնտեսական բարելավման առումով չափազանցված սպասելիքներ ունենալ այս գումարման խորհրդարանից՝ անիմաստ է: Մանավանդ որ՝ կառավարության «տնտեսական բլոկը», ըստ ամենայնի, մնալու է նույնը: Իսկ Տիգրան Սարգսյանի կառավարության ամենամեծ նվաճումը, ինչպես հայտնի է, այն է, որ «համաշխարհային ֆինանսատնտեսական խորը ճգնաժամի պայմաններում» այդ կառավարությունը «չի կրճատել ոչ մի սոցիալական ծրագիր»: Այսինքն՝ թոշակառուների 30 հազար դրամը չի դարձրել, ասենք, 28 հազար: Դա, իհարկե, սխրանք է, որը մեր թոշակառուները չեն մոռանա մինչեւ իրենց կյանքի վերջը: Այս խորհրդարանը կձեւավորի ահա այսպիսի կառավարություն՝ նման «նվաճումներով», եւ, հետեւաբար, այս ոլորտում որեւէ առաջընթաց չի սպասվում:

Փոխարենը՝ քաղաքական համակարգի, խոսքի ազատության զարգացման, ընտրական գործընթացի կատարելագործման ուղղությամբ ներկայիս խորհրդարանը կարող է որոշակի քայլեր անել՝ մանավանդ, որ այստեղ, կարծես թե, կա հասարակական պահանջներին ընդառաջ գնալու ցանկություն: Մասնավորապես, պետք է փոխվեն Հեռուստատեսության եւ ռադիոյի, ինչպես նաեւ թվայնացմանը վերաբերող օրենքները: Իհարկե, անհրաժեշտ է փոխել նաեւ Ընտրական օրենսգիրքը՝ ավելացնելով ողջ ընտրական գործընթացի պարտադիր նկարահանումը, ընտրողների ցուցակների հրապարակումը եւ արտասահմանում ապրող մեր քաղաքացիների քվեարկությունը: Այսինքն՝ ընդդիմությունն, իմ կարծիքով, պետք է իր առաջ դնի իրատեսական նպատակներ, ոչ թե «բռնացնի» ինչ-որ գլոբալ հարցերից, որոնք, միեւնույն է, չեն լուծվելու:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## Պուտինը ԼՂ հակամարտության հարցը մի կողմ չի դնելու



Aravot.am-ը ԱՊՀ երկրների ինստիտուտի տնօրեն Կոնստանտին Զատուլինի հետ զրույցում հետաքրքրվեց՝ ինչպիսի՞ն է նրա գնահատականը ՀՀ-ում տարածված այն կարծիքին, թե ՌԴ ներկայիս նախագահ Վլադիմիր Պուտինը Մեդվեդեւի նման շատ ժամանակ չի տրամադրի ԼՂՀ հարցի կարգավորմանը: Կ. Զատուլինը պատասխանեց. «Չեմ ուզում քննադատած լինել Մեդվեդեւին, սակայն նրա պաշտոնավարման ժամանակահատվածում ԼՂՀ հարցի կարգավորման պատասխանատու ժամանակահատված էր: Ուստի ակտիվությունը պայմանավորված էր հենց այդ հանգամանքով: Մյուս կողմից էլ՝ ես անձամբ կողմ չեմ, որ Վլադիմիր Պուտինն ամեն ամիս հանդիպի ղարաբաղյան հարցով, քանի որ մի որոշ ժամանակ հետո դուք հարց կտաք՝ ո՞ւր են արդյունքները, մանավանդ, որ արդյունքները դեռ անհասանելի են: Բայց դա չի նշանակում, որ Պուտինը եւ նրա խորհրդատուները ղարաբաղյան հակամարտության հարցը մի կողմ են դնելու: Նախագահ Պուտինի կողմից այդ ուղղությամբ անպայման քայլեր ձեռնարկվելու են»: Կ. Զատուլինը նաեւ հավելեց. «Մեզ համար ընդհանրապես ձեռնտու չեն ռազմական գործողությունները Ադրբեջանի ու Հայաստանի միջեւ»:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Հովիկ Աբրահամյանը՝ ԲՀԿ-ի ճնշմա՞մբ

«Գնանք՝ նախապատրաստվենք վաղվա նիստին: Շնորհակալ եմ բոլորից: Վաղը ԱԺ-ում հնարավորություն կունենանք շփվելու»,- երեկ երեկոյան ՀՀԿ գործադիր մարմնի եւ խորհրդի նիստերի ավարտից հետո դուրս գալով ՀՀԿ գրասենյակից՝ ասաց ՀՀԿ փոխնախագահ Հովիկ Աբրահամյանը՝ «դիմագրավելով» լրագրողների հարցերին: Մեկ հարցի Հովիկ Աբրահամյանն, այնուհանդերձ, պատասխանեց: «Չի կարող որեւէ մեկը ճնշում գործադրել ՀՀԿ-ի վրա, այն էլ կադրային քաղաքականության մեջ: Դա բացառեք ընդմիշտ»,- ասաց նա՝ հակադարձելով լրագրողներից մեկի դիտարկմանը, որ, այնուհանդերձ, տարածված կարծիք կա, թե ՀՀԿ-ն Հովիկ Աբրահամյանին առաջարկեց ԱԺ նախագահի պաշտոնում ԲՀԿ-ի ճնշմամբ:

Կարդացեք էջ 3:

### Իշխանական լծակներով հարցերն ավելի դյուրին են լուծվում

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը ընդդիմություն կմնա՞, թե՞ որոշ ժամանակ անց կրկին կոալիցիա կմտնի հարցին ՀՀԿ պատգամավոր Արտաշես Գեղամյանը դժվարացավ պատասխանել ու չմեկնաբանեց այն լուրերը, թե ԲՀԿ-ն ընդդիմություն է ներկայանում՝ նախագահական ընտրություններին հօգուտ իշխանությունների ընտրազանգված հավաքելու համար: «Արդյոք նախընտրական այն խոստումները, որոնք տվել է ցանկացած կուսակցություն, որը ներկայացված էր Ազգային ժողովում, ավելի դյուրին է կատարել՝ լինելով իշխանությա՞ն մեջ, թե՞ ընդդիմության կամ կառուցողական դաշտում: Իսկ իմ կարծիքով՝ եթե իշխանական լծակներ կան, այս կամ այն սոցիալական ոլորտին վերաբերող լուծումները, կարծես թե, ավելի դյուրին են ենթակա լուծման»,- Aravot.am-ին ասաց պարոն Գեղամյանը:

### «Կապրենք՝ կտեսնենք»

ԲՀԿ-ն քաղաքական պաշտոններ չի վերցնելու: Երեկ լրագրողների հետ զրույցում ասաց ԲՀԿ պատգամավոր Սամվել Բալասանյանը. «Ըստ կանոնակարգ օրենքի՝ մեզ հասնում է 4 հատ հանձնաժողովի նախագահի, 3 հատ փոխնախագահի տեղ»: Հարցին, թե 6 ամիս անց ԲՀԿ-ն կրկին մտնելո՞ւ է կոալիցիա, պարոն Բալասանյանն ասաց՝ կապրենք՝ կտեսնենք:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 12-ին, «Իրատես de facto» ակումբի հյուրն է ԱԺԴ նախագահ Արշակ Սադոյանը:

### Եղանակ

Երեւան + 13 + 26, Շիրակ + 3 + 18, Կոտայք + 3 + 18, Գեղարքունիք + 3 + 18, Լոռի + 6 + 20, Տավուշ + 8 + 23, Արագածոտն լեռներ + 3 + 18, Արագածոտն նախալեռն. 10 + 25, Արարատ + 12 + 27, Արմավիր + 12 + 27, Վայոց Ձոր լեռներ + 3 + 18, Վայոց Ձոր նախալեռն. + 12 + 27, Սյունիքի հովիտներ + 10 + 27, Սյունիքի նախալեռներ + 5 + 20, Արցախ + 9 + 23

## «Ժամանակը ցույց կտա, թե ով է սխալ եւ ով՝ ճիշտ»

«Հանրապետություն» կուսակցության անդամ, մանկավարժ Սվետլանա Մաթեւոսյանն անդրադառնալով երեկ «Առավոտում» ՀԱԿ անդամ Գայանե Առուստամյանի՝ Արամ Սարգսյանին վերաբերող՝ «Եթե դու փոքր երեխայի նման խռովում-դուրս ես գալիս, դու այդքան հասուն չես» հրապարակմանը՝ ասաց. «Խորհուրդներ եւ գնահատականներ տալու, առավել եւս՝ քաղաքական վերլուծություններ անելու եւ Արամ Սարգսյանի քաղաքական քայլերը հասկանալու համար Գայանե Առուստամյանը դեռ տասնյակ տարիներ ունի:

Իսկ մինչ այդ խորհուրդ կտայի ինչպես Գայանե Առուստամյանին, այնպես եւ մի շարք այլ բանախոսների՝ իրենց գնահատականներում շանցնել քաղաքական կոռեկտության սահմանները եւ առաջնորդվել ՀԱԿ առաջնորդի խոսքերով, այն է՝ ժամանակը ցույց կտա, թե ով է սխալ եւ ով՝ ճիշտ»:

## ՀԱԿ խմբակցությունը չի մասնակցի առաջին նիստին

Երեկ տեղի է ունեցել Հայ ազգային կոնգրեսի խորհրդարանական խմբակցության անդրանիկ նիստը, որում ընդունված հայտարարության մեջ մասնավորապես ասված է. «2012 թվականի մայիսի 6-ը Հայաստանի ժողովրդի ազատ կամարտահայտման եւ երկրում ժողովրդավարության հաղթանակի օր դառնալու փոխարեն նշանավորվեց պետականորեն կազմակերպված եւ ընտրակեղծարարության ծավալով իր նախադեպը չունեցող կեղծված խորհրդարանական ընտրություններով:

Մայիսի 31-ին Ազգային ժողովի նիստերի դահլիճում առաջին նստաշրջանի առաջին օրը բացման հանդիսավոր նիստի է հավաքվելու մի խորհրդարան, որի մեծամասնությունն ընտրված չէ Հայաստանի ժողովրդի կողմից, այլ ապօրինաբար ստացել է իր մանդատները ընտրակաշառքի համատարած բաժանման, ընտրողների ահաբեկման, լայնածավալ բազմակի քվեարկության արդյունքում: Ազգային ժողովին այդ օրը ողջունելու է գործող նախագահ Սերժ Սարգսյանը, որը նույնպես չի ընտրվել ազատ եւ արդար ընտրություններով:

Հայ ազգային կոնգրեսի պատգամավորական խմբակցությունը ի նշան բողոքի՝ ժողովրդի նկատմամբ Սերժ Սարգսյանի ռեժիմի կատարված հանցագործությունների դեմ, չի մասնակցի առաջին նիստին:

Միեւնույն ժամանակ, վստահեցնում ենք, որ ակտիվորեն մասնակցելու ենք Ազգային ժողովի աշխատանքներին եւ մեզանից կախված ամեն ինչ կանենք՝ Ազգային ժողովի ամբիոնը ժողովրդավարական Շարժման հաղթանակին ծառայեցնելու համար»:

## Յիրիկյանը վարչապետ չի լինի

«Անձամբ ճանաչելով մեծ հայրենասեր Ռալֆ Յիրիկյանին, ծանոթ լինելով նրա հայրենանվեր գործունեությանը՝ ուղղակի բացառում եմ Ռալֆ Յիրիկյանի՝ քաղաքականությամբ զբաղվելու մտադրությունները ու ցանկությունները: Բազմաթիվ անգամ Ռ. Յիրիկյանը հերքել է նման խղճուկ, ողորմելի հայտարարությունները, որոնք միշտ էլ արվել են չարակամ, թունավոր, տգետ մարդկանց կողմից: Ըստ իս՝ Ռ. Յիրիկյանը իր պրոֆեսիոնալ ունակություններով, իր աշխատասիրությամբ մեծ պատասխանատվությամբ ծառայում է հայոց պետականությանը՝ իր մեծագույն ներդրումն ունենալով հայոց տնտեսության զարգացման մեջ: Կրկնում եմ՝ ուղղակի բացառելով նրա քաղաքական գործունեությունը, վստահաբար նշում եմ, որ Հայաստանի վարչապետը կլինի ինչպես ՀՀ նախագահի, այնպես էլ Հանրապետական կուսակցության արժանավոր թեկնածուներից մեկը»,- Henaran.am-ին ասել է սպորտի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար Խաչիկ Ասրյանը՝ հերքելով տեղեկությունները, թե նաեւ «Վիվասել-ՄՏՍ» ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանն է ցանկանում զբաղեցնել ՀՀ վարչապետի պաշտոնը:

# Ինչու է քանդվում Փակ շուկան




Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինական հատուկ ծրագրերի կարգավորման բաժնի գլխավոր մասնագետ, ճարտարապետ Սուրեն Մելիք-Քարամյանի ներկայացմամբ՝ Երեւանի Փակ շուկայի կոնստրուկցիաները գտնվում են անմխիթար վիճակում, եւ դրանք հնարավոր չէ պահպանել: Իսկ ՀՀ վաստակավոր ճարտարապետ Սաշուր Քալաշյանն էլ վստահեցնում է, որ անկախ կոնստրուկցիաների վթարայնության աստիճանից՝ հնարավոր է գտնել Փակ շուկայի տանիքը պահպանելու ելքը: Ճարտարապետների ԴԵՄ ԱՌ ԴԵՄ բանավեճն ամբողջությամբ կարող եք դիտել aravot.am կայքում:

Սաշուր Քալաշյան- Հասկանալու համար խնդիրը, մենք պետք է խոսենք այն մասին, թե երբ սկսվեց այս ամենը: Դա սկսվեց այն ժամանակ, երբ խոսք անգամ չկար շենքի սեյսմիկ իրավիճակի մասին: Դա սկսվեց հունվարի տոնական օրերին, երբ, ինչպես եւ մայիսի 28-ի լույս գիշերը, որեւէ ատյան տեղյակ չէր՝ ոչ քաղաքապետարանը, ոչ հուշարձանների պահպանության վարչությունը, եւ էլի միայն հանրությունը բողոքի ձայն բարձրացրեց:

«Առավոտ»- Այսինքն՝ ստացվում է, որ կառուցապատողի մոտ կար տանիքը քանդելու միտում՝ անկախ այն բանից, թե որքանով է շենքը վթարային:

Ս. Քալաշյան- Այո: Այդ միտումը սեփականատիրոջ մոտ կար, նա իր խնդիրներն ուներ, եւ նրա մտքով չէր էլ անցնում, որ դրա համար պետք է թույլտվություն ստանար: Ցավոք, դա տարածված երեւույթ է: Ինչ վերաբերում է սեյսմիկ անվտանգության նկատառումներից ելնելով շենքը քանդելուն, ապա այդպիսի մոտեցման դեպքում ամբողջ Երեւանը պետք է քանդվի, քանի որ մայրաքաղաքում ոչ մի շենք չունի համապատասխան սեյսմակայունություն:

Սուրեն Մելիք-Քարամյան- Ես չեմ կիսում այդ մոտեցումը, դա հնարավոր է անել փուլային տարբերակով: Դա քաղաքաշինական մեծ, թանկ ծրագիր է, որը, սակայն, անհրաժեշտ է: Մենք ի վերջո կգանք նաեւ դրան: Ինչ վերաբերում է կոնկրետ շուկայի դեպքին, ապա ես, իհարկե, ողջունում եմ, որ մեր հասարակությունը արթնացել է եւ քաղաքացիական հետաքրքրություն է ցուցաբերում իր մշակութային ժառանգության հանդեպ, սակայն շատ դեպքերում դա դիլետանտական մակարդակի է, եւ այդ աղմկողների մեծ մասը երիտասարդներ են, ուսանողներ, որոնք ինչ-որ մեկի հրահրմամբ, ինչ-որ լոզունգների տակ ելույթներ են ունենում, որոնք ոչ մասնագիտական հարթությունում են:

«Առավոտ»- Իսկ ինչպե՞ս եք բացատրում այն, որ այդ քանդման կամ, ինչպես դուք եք ասում՝ ամրակայման աշխատանքները տեղի են ունենում տոնական օրերին եւ գիշերով:

Ս. Մելիք-Քարամյան- Դա բոլորիս ցավն է, բոլորս էլ դրանից անակնկալի եկանք: Դա տեղի ունեցավ երկրի համար շատ կարեւոր տոնի նախօրեին, երբ կառավարական բոլոր ատյանները զբաղված էին: Ուզում եմ նշել, որ արդեն իսկ ստեղծվել է համապատասխան հանձնաժողով, որն արտագնա նիստերի ընթացքում հարցը կուսումնասիրի: Արդեն իսկ վերցված է նմուշ՝ այդ Ձեր ասած քանդած մասից, բայց դա փլուզված է՝ եկեք ճիշտ անվանենք իրերը, որպեսզի լաբորատոր ուսումնասիրությունները ցույց տան:

«Առավոտ»- Բայց եթե լաբորատոր ուսումնասիրությունները դեռ ցույց չեն տվել, այդ դեպքում ինչպե՞ս եք պնդում, որ դա փլուզված է եւ ոչ թե քանդված:

Ս. Մելիք Քարամյան- Դա շատ մասնագիտական հարց է, որի պարզաբանումը ընդարձակ է:

«Առավոտ»- Իսկ մտավախություն չունե՞ք, որ մինչ դուք հանձնաժողով եք ստեղծում, հարցն ուսումնասիրում եւ եզրակացություններ տալիս, կառուցապատողը կարող է հերթական գիշերային «փլուզումն» անել եւ ավարտել իր գործը՝ վերջնականապես քանդելով այդ կամարները:

Ս. Մելիք Քարամյան- Ես կիսում եմ Ձեր մտահոգությունը, սակայն նշեմ, որ քաղաքապետարանը համապատասխան նորմատիվային փաստաթուղթ չի ներկայացրել շինարարին, այսինքն՝ հաստատված ճարտարապետաշինարարական առաջադրանք նա չունի, որով պետք է կատարվեր նախագիծ, որը պետք է անցներ մշակույթի նախարարության փորձաքննությունը, հաստատվեր քաղաքաշինական խորհրդի կողմից եւ նոր այդ հաստատված նախագծի հիման վրա ունենար շինարարական թույլտվություն: Այսօրվա դրությամբ, ես պաշտոնապես հայտարարում եմ, այդ առաջադրանքը քննարկման փուլում է, եւ կառուցապատողի ձեռքին փաստաթուղթ չկա, նրա մոտ ավելորդ շտապողականություն է առաջացել, եւ նա ինքնակամորեն փորձել է այդ վնասված մասերը ինչ-որ բան անել, որը փլուզվել է:

Ս. Քալաշյան- Այստեղ խնդիրն այն է, որ օրենքով ցանկացած հուշարձան՝ անկախ դրա նշանակությունից եւ սեփականատիրական իրավունքից, պետք է ունենա դրա պահպանության պայմանագիր՝ կնքված լիազոր մարմնի, այսինքն՝ մշակույթի նախարարության հետ: Եվ այդ պայմանագրում պետք է նշված լինեն սեփականատիրոջ իրավունքները ու պարտականությունները, եւ այն, թե դրանց խախտման դեպքում սեփականատերն ինչ պատիժ է կրելու: Սակայն այսօր հազարավոր հուշարձաններից նման պայմանագիր ունեն 70-ից ոչ ավելին, այն էլ մեծ մասամբ՝ հոգեւոր կառույցներ են: Մնացածը չունեն այդպիսի պայմանագրեր, եւ դրանով մտահոգվողներ էլ չկան:

«Առավոտ»- Փակ շուկան եւս չունի պահպանության մասին պայմանագիր:

Ս. Քալաշյան- Ոչ, դրա համար էլ սեփականատերն իր բիզնեսից ելնելով՝ իր շահույթ ստանալու նպատակն է հետապնդում: Երեւի նա չգիտի էլ, որ պետք է այդպիսի պայմանագիր կնքի:

«Առավոտ»- Բայց չէ՞ որ կա համապատասխան ատյան, որը պարտավոր է «հիշեցնել» սեփականատիրոջը օրենքի պահանջի մասին:

Ս. Մելիք-Քարամյան- Դա մշակույթի նախարարության հուշարձանների պահպանության գործակալությունն է:

«Առավոտ»- Իսկ կոնկրետ շուկայի օրինակով, ի՞նչ կփոխվեր, եթե լիներ այդ պայմանագիրը:

Ս. Քալաշյան- Շատ պարզ բան՝ եթե լիներ այդ պայմանագիրը, որտեղ նշված լիներ նաեւ խախտման համար պատժի չափն ու ձեւը, այդ դեպքում սեփականատերը քայլ անելուց առաջ կմտածեր՝ արժե՞ գնալ այդ ապօրինությանը, թե՞ ոչ: Մինչդեռ այսօր պատժի չափն այն է, ինչը մեկ անգամ արդեն կիրառեցին՝ 200 հազար դրամ:

Բանավեճը վարեց
ԱՐԵՎԻԿ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Նախագիծն իրականացվում է «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» ծրագրի շրջանակներում:

# Երրորդ հանրապետության օրենսդիրը



Այսօր մեկնարկում է ՀՀ հինգերորդ գումարման խորհրդարանի առաջին նիստը: Այս գումարման խորհրդարանում չի լինի ԱԺ երկարամյա պատգամավոր Վիկտոր Դալլաքյանը: 1995-2012 թվականների ընթացքում Վիկտոր Դալլաքյանը չորս անգամ անընդմեջ ընտրվել է Ազգային ժողովի պատգամավոր՝ մեծամասնական ընտրակարգով, Վանաձոր քաղաքից: Իր 17-ամյա պատգամավորական գործունեությյան ընթացքում Դալլաքյանը հեղինակել է 83 օրենք, որոնք խորհրդարանն ընդունել է: Նա հեղինակն է այնպիսի հիմնարար փաստաթղթերի, ինչպիսիք են «ՀՀ ընտրական օրենսգիրքը», «Հանրաքվեի մասին», «Տեղական հանրաքվեի մասին», «Աղետի գոտու վերականգնման մասին», «Սահմանամերձ տարածաշրջանների մասին», «Սեւանա լճի մասին», «Մանկապատանեկան սպորտի մասին» օրենքները եւ այլն:

Նորանկախ Հայաստանի պատմության մեջ այս ցուցանիշով Վիկտոր Դալլաքյանը իրեն հավասարը չունի: Հայաստանյան իրականության աբսուրդներից մեկն էլ հենց այն է, որ նման բացառիկ օրենսդիրներն այսօր մեր խորհրդարանում տեղ չեն գտնում, մինչդեռ իրեն հարգող ցանկացած երկրում նման օրենսդիրը լինում է «պառլամենտի զարդ»:

Վերջին օրերին Վանաձորում «Առավոտի» կատարած լրագրողական հետաքննությունը ցույց է տվել, որ մայիսի 6-ին Վանաձորում ոչ թե խորհրդարանական ընտրություններ են տեղի ունեցել, այլ դավադրություն՝ Վիկտոր Դալլաքյանի դեմ: Թեմայի մանրամասներին «Առավոտը» դեռ կանդրադառնա, «կբացահայտենք», թե ո՞վ է օգտագործվել որպես գործիք Վիկտոր Դալլաքյանի դեմ:

# Սերժ Սարգսյանը՝ ՀՀԿ-ի եւ ՕԵԿ-ի միասնական թեկնածու

## ՀՀԿ-ն «բաժանեց» նաեւ օրենսդիրի պաշտոնները

«Քաղաքական կոալիցիան վերահաստատում է առաջիկա նախագահական ընտրություններում՝ ի դեմս նախագահ Սերժ Սարգսյանի, միասնական թեկնածուով հանդես գալու որոշումը, դրանով իսկ իր քաղաքական կամքն ու վճռականությունն արտահայտում քաղաքական պատասխանատվություն ստանձնելու երկրի հետագա կայուն զարգացման, առաջընթացի եւ անվտանգության ապահովման, միջազգային ասպարեզում Հայաստանի Հանրապետության հեղինակության ամրապնդման գործում»,- ասված է երեկ երեկոյան ՀՀԿ-ի եւ ՕԵԿ-ի ստորագրած կոալիցիոն հուշագրում: Հիմք ընդունելով 2012 թվականի մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքները, կարեւորելով 2008 թվականի մարտի 21-ին ստորագրված քաղաքական կոալիցիայի համաձայնագրի ոգուն համապատասխան քաղաքական համագործակցության շարունականությունը՝ երեկ ՀՀԿ գրասենյակում ՀՀ եւ ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանն ու ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարյանը ստորագրեցին նոր կոալիցիոն հուշագիր: Հուշագրի ստորագրումից հետո Սերժ Սարգսյանն ու Արթուր Բաղդասարյանը միասին դուրս եկան ՀՀԿ գրասենյակից: Նախագահ Սարգսյանը նախ մոտեցավ եւ ձեռքով բարեւեց մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրված ՀՀԿ-ական Հրանտ Գրիգորյանին՝ Մանվել Գրիգորյանի եղբորորդուն, ապա Հովհաննես Սահակյանին, տեւական զրույցի բռնվեց նաեւ Վահե Հակոբյանի՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի սեփականատեր Մաքսիմ Հակոբյանի որդու հետ: ՕԵԿ-ից Արթուր Բաղդասարյանին ուղեկցում էին Միեր Շահգելդյանը եւ Հովհաննես Մարգարյանը: ՀՀԿ գրասենյակից բոլորը հեռացան բարձր տրամադրությամբ:



Կոալիցիոն հուշագրի ստորագրմանը նախորդել էին Հայաստանի Հանրապետական կուսակցության գործադիր մարմնի եւ խորհրդի նիստերը: Իշխող կուսակցությունը որոշում կայացրեց ՀՀ հինգերորդ գումարման խորհրդարանի նախագահի պաշտոնում առաջադրել ԱԺ նախկին նախագահ Հովիկ Աբրահամյանի, իսկ նախագահի տեղակալների պաշտոններում՝ Էդուարդ Շարմազանովի եւ Հերմինե Նաղդալյանի թեկնածությունները: ԱԺ արդեն նախկին նախագահ Սամվել Նիկոյանը, ՀՀԿ մամուլի խոսնակ Էդուարդ Շարմազանովի խոսքերով, «իր ծառայությունները ի փառս մեր պետության կօգտագործի այլ ոլորտում»: Ենթադրվում է, որ Սամվել Նիկոյանը որեւէ պաշտոն կզբաղեցնի գործադիր մարմնում: Ըստ շրջանառվող տեղեկությունների՝ նա կնշանակվի բնապահպանության նախարարի պաշտոնում:

ՀՀԿ-ն նաեւ որոշել է, որ ՀՀԿ խորհրդարանական խմբակցությունը շարունակելու է ղեկավարել Գալուստ Սահակյանը, իսկ խմբակցության քարտուղարի հարց չի քննարկվել: ՀՀԿ-ն նախկին 6-ի փոխարեն նոր գումարման խորհրդարանում կունենա թվով 8 հանձնաժողովների նախագահներ, մնացյալ չորս հանձնաժողովները «տրվել» են ԲՀԿ-ին: Այսպիսով, պետական-իրավական հանձնաժողովը կշարունակի ղեկավարել Դավիթ Հարությունյանը, տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը՝ Վարդան Այվազյանը, ֆինանսաբյուջետային հանձնաժողովը՝ Գագիկ Մինասյանը, սոցիալական հանձնաժողովը՝ Հակոբ Հակոբյանը, առողջապահության հանձնաժողովը՝ Արա Բաբլոյանը, կրթության եւ գիտության հանձնաժողովը՝ Արտակ Դավթյանը, արտաքին հարաբերությունների հանձնաժողովը, որը նախկինում ղեկավարում էր ՀՅԴ-ական Արմեն Ռուստամյանը, կղեկավարի ՀՀԿ-ական Արտակ Զաքարյանը, եւ պաշտպանության, ներքին գործերի հանձնաժողովը կգլխավորի մեծամասնական ընտրակարգով թիվ 8 ընտրատարածքից ընտրված Կորյուն Նահապետյանը, որը հայտնի օլիգարխ Սամվել Ալեքսանյանի բարեկամն է:

Էդուարդ Շարմազանովը նաեւ տեղեկացրեց, որ երեկվա նիստերում գործադիրին առնչվող հարցեր չեն քննարկվել: Դրանք կհստակեցվեն հաջորդ նիստում: Թեեւ ըստ Սահմանադրությամբ սահմանված ժամանակացույցի՝ ՀՀԿ-ն մոտավորապես 50 օր ժամանակ ունի գործադիրին առնչվող հարցերը հստակեցնելու համար, բայց Շարմազանովն ասաց, թե չի կարծում, որ «հստակեցումներն այդքան երկար կձգվեն»: Ամեն դեպքում նա նաեւ հավելեց. «Լուրջ փոփոխություններ սպասել պետք չէ: ՀՀԿ-ն կառաջադրի հանրապետական վարչապետի»: Այդուհանդերձ, նա չհստակեցրեց, թե կոնկրետ ո՞ւմ թեկնածությունը կարող է առաջադրվել: ՀՀԿ մամուլի խոսնակն ասաց, թե գործող վարչապետի փոփոխության հարց չի քննարկվել, իսկ նրա անձնական կարծիքով՝ Տիգրան Սարգսյանը կշարունակի պաշտոնավարել:

Շարմազանովը տեղեկացրեց նաեւ, որ ՕԵԿ-ի նախարարական պորտֆելները կպահպանվեն, դրանք կլինեն երեքը, իսկ նախկին ԲՀԿ-ական նախարարներին կփոխարինեն ՀՀԿ-ականները: Լրագրողների հարցին՝ ինչո՞ւ ՕԵԿ-ին չի առաջարկվել ԱԺ փոխնախագահներից մեկի պաշտոնը, ՀՀԿ մամուլի խոսնակն ասաց, որ նման հարց չի քննարկվել: Aravot.am-ի ճշտող հարցին՝ ՕԵԿ-ը չի՞ ուզել, թե՞ ՀՀԿ-ն չի առաջարկել, Շարմազանովը հստակեցրեց. «Ընդհանրապես չի քննարկվել: Երբ ԲՀԿ-ն դուրս եկավ կառավարությունից, քննարկում չի եղել, եւ այդ պորտֆելներին ՕԵԿ-ում չեն հավակնել»: Լրագրողներից մեկը հետաքրքրվեց նաեւ, թե ի?նչ ճակատագիր է սպասվում ԲՀԿ-ական նախկին նախարարներին, ովքեր հրաժարվել են իրենց պաշտոններից: Ի պատասխան՝ ՀՀԿ մամուլի խոսնակն ասաց, որ այլ կուսակցությունների ներկայացուցիչների քաղաքական ճակատագրերի մասին ինքը ոչինչ ասել չի կարող:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# Դիտորդների զեկույցը՝ ազդանշան եւ զգուշացում

## Ասում է ՀԱԿ անդամ Վահագն Խաչատրյանը

«Ես հիանում եմ Դավիթ Հարությունյանի պահվածքով ու Խոսրով Հարությունյանի այդ բողոքական կեցվածքով: Իմ դուրը գալիս է: Ի՞նչ է պատահել ձեզ, որ հիմա այդ մարդկանց այս գնահատականն եք տալիս: Իրենք ասել են իրականությունը, իրենք ավելին չեն ասել, պակաս են ասել, օբյեկտիվորեն փորձել են իրենց ընդունած նորմերի շրջանակներում տալ այն, ինչ որ կա»,- ՀԱԿ անդամ, Երեւանի նախկին քաղաքապետ Վահագն Խաչատրյանն այսպես արձագանքեց, երբ խնդրեցինք մեկնաբանել ԵԽԽՎ Բյուրոյի ժամանակավոր հանձնախմբի վերջին զեկույցը, որը կազմվել է Եվրախորհրդարանի պատգամավոր, բարոնուհի Էմմա Նիքոլսոնի գլխավորած դիտորդական առաքելության կողմից մայիսի 6-ին անցկացված դիտարկման հիման վրա:

Aravot.am-ի հետ զրույցում մեր հարցին՝ այդ զեկույցը եւ կոշտ գնահատականները Ձեր սրտո՞վ են՝ Վահագն Խաչատրյանն ի պատասխան՝ ծիծաղեց. «Սրտո՞վ: Ուղղակի զարմանալի է, որ ուշադրություն են դարձրել: Մի իրականություն կա՝ իրենք մեզ հետ հանդիպումների ժամանակ պարտաճանաչորեն գրառում էին բոլոր այն դիտողությունները, որոնք մենք էինք տեսել, ու այն, ինչը որ իրենք էին տեսել, որոնց մասին մեզ հետ պարզ է՝ չէին կիսվել: Ընտրությունների օրը իրենցից ովքեր եղել են տեղամասերում, ես էլ եմ առիթ ունեցել իրենց հետ հանդիպելու, խոսելու: Իրենք կոռեկտ էին եւ չէին փորձում հատկապես տեղամասում գնահատական տալ՝ կատարելով իրենց այդ օրվա պարտականությունը: Ամեն ինչից զգացվում էր, որ իրենք երանության մեջ չէին, որ եկել էին Հայաստան. տեղամասերում լինել 10-12 ժամ, նստել այն աթոռներին, որտեղ 5 րոպեից ավելի հնարավոր չէր նստել՝ դպրոցական այդ անհարմար աթոռներին... Ընդհանրապես տեղամասերի անհարմարությունների մասին չեմ խոսում, որտեղ ընտրություն չէր կարելի համարել: Բայց մի բան էին իրենք ասում, համենայնդեպս, ինձ հետ հանդիպման ժամանակ այդ խոսակցությունը եղել է, ես 2 անգամ հանդիպել եմ իրենց հետ: Իրենք միշտ էլ այն, ինչ որ տեսել են՝ գրել են: Այդ հարցում ազնիվ են: Բայց ամենակարեւորը՝ քաղաքական որոշումից է կախված, թե ինչ գնահատականներ կտան: Ի վերջո՝ իրենք չեն որոշողը: Իրենք պատկերը տալիս են, Եվրոպայի խորհրդում քաղաքական մարմինն է որոշում՝ ելնելով Հայաստանի ընդհանուր վիճակից, Հայաստանի նկատմամբ ունեցած ակնկալիքներից: Հիմա ինչ-ինչ պատճառներից ելնելով՝ այս անգամ իրենք որոշել են իրականությունը ներկայացնել, ինչը մեծ ցավ է պատճառել գործող իշխանությանը»:



Պարոն Խաչատրյանը չի բացառում, որ գործող իշխանությունը խոստումներ է տվել ու չի կատարել, ինչի պատճառով էլ արժանացել է այդ զեկույցին. «Իրենք իրականում միգուցե այսպիսի ընտրություններ չէին սպասում»:

Մեր դիտարկմանը՝ ինչ-որ արտառոց բան չի եղել, միշտ էլ ընտրությունները լինում են, ընդդիմությունը ասում է՝ կեղծված են, նույն ընտրախախտումները, ի՞նչ արտառոց բան է եղել, որ չէին սպասում, պարոն Խաչատրյանը պատասխանեց. «Կարող է՝ ավելին էլ է եղել նույնիսկ, 2008-ին սրանից ավելի վատ է եղել: Այս ամեն ինչի մեջ երեւի իրենք մտածում էին, որ Հայաստանը պիտի ընտրությունների անցկացման իր չափանիշները փոխեր, այսինքն՝ նկատի ունեմ, որ այս կողմից խոստումներ էին տրվել, եւ նրանք ակնկալիք են ունեցել, որ դրանք կկատարվեն: Բայց այդ խոստումներին իսկի չեն էլ մոտեցել: Հակառակն են արել: Վերջիվերջո՝ եթե 2007-ի խորհրդարանական ընտրություններն ու սա համեմատենք՝ հետընթաց է միանշանակ»: Կարելի՞ է ասել, որ Սերժ Սարգսյանի հարաբերություններն են վատացել դրսի հետ՝ Վահագն Խաչատրյանը պատասխանեց. «Խոստումների խնդիր է, ես մտածում եմ: Իրենք փորձել են մեղմ լինել իշխանության նկատմամբ, այդ թվում նաեւ՝ ֆինանսական օգնության, ինչ-որ բաներում իրենց աչքերը փակել են, օրինակ՝ Մարտի 1-ի գնահատականների առումով, հետեւողական չեն եղել: Միգուցե դրա արդյունքում օլիգարխիայի, կոռուպցիայի, տնտեսության հետ կապված, հնարավոր է, խոստումներ են եղել, բայց դե, ոչ մի բան չի կատարվել: Կոնկրետ ես եւ մեր համակիրները ներկայացրել ենք Հայաստանի իրավիճակը՝ սոցիալական, նախընտրական, հետընտրական, ինչ որ կա: Իրենք հիմա ընդունելով դա եւ իրենցն էլ ավելացնելով՝ կարելի է ասել, գնահատական են տվել, ինչը նշանակում է՝ Հայաստանին նույնիսկ դեղին քարտ են տվել, թե՝ գիտեք ինչ, հերիք է խաբեք, մենք էլ չենք խաբվում: Հիմա շարունակությունը ինչ կլինի՝ հետեւողական կլինեն, ցուցակներ... միեւնույն անուն-ազգանվամբ մարդիկ. այդ ամեն ինչը սրանք կգրեն, հաշվի կառնեն՝ այդ դեպքում...»: Ըստ Վահագն Խաչատրյանի՝ միջազգային դիտորդական առաքելության այս զեկույցն ազդանշան եւ զգուշացում է նախագահական ընտրությունների համար. «Ազդանշան է, որ տեսեք՝ փոխվեք, հակառակ դեպքում չզղջաք. սա հենց այդպիսի ազդանշան պետք է համարել»:

ՀՌԻՓՍԻՄԵ ԶԵԲԵԶՅԱՆ

# «Գեյերին հանդուրժել՝ նշանակում է հանդուրժել նաեւ կրիմինալին ու աղանդավորներին»

## Ասում է հոգեբան Աշոտ Հակոբյանը

Դաշնակցական Աշոտ Հակոբյանի կարծիքով՝ միասեռականները այսքան չէին ակտիվանա ու բազմազանություն կոչվող շքերթը չէին կազմակերպի, եթե հասարակությունն այդքան ուշադրություն չդարձներ նրանց, լրատվամիջոցներն էլ հաճախակի չլուսաբանեին իրականում գոյություն չունեցող նրանց խնդիրը:

«Շատ եմ ցավում, իրոք տոն տվեցինք նրանց, էստեղ պետք էին կշռադատված մոտեցում, հաշվարկված քայլեր, բայց ոչ էդպիսի բուռն հակազդեցություն, որովհետեւ բուռն հակազդելու դեպքում իրենց ազդեցությունը նորից կմեծանա: Ես հասկանում եմ այդ երիտասարդներին էլ, իրենց վիրավորված ազգային ինքնագիտակցությունն էլ, շատ գովելի է, ապրե՛ք տղեք, բայց գիտե՞ք, ձեր պայքարի ձեւը մեծացնում է այն երեւույթը, ինչի դեմ դուք պայքարում եք, այսինքն՝ ձեր պայքարը իրենց դարձնում է այդպիսին, իրենք դառնում են միավոր, ու կամաց-կամաց ստացվում է արժեք կամ կեղծ արժեք: Սկսում է մարմին ստանալ ու ամբողջական դառնալ, որովհետեւ դուք անընդհատ ազդեցություններ եք անում, եկեք թողնենք այդ հակազդեցությունների պահը, ճիշտ գնահատենք եւ ճիշտ տեղորոշենք, որպեսզի կարողանանք հնարավորինս մեզնից հեռու պահել»,- խորհուրդ է տալիս հոգեբանը: Նրա համոզմամբ՝ այս վիճակը մեզ պարտադրված է Արեւմուտքից, եւ նպատակն այն է, որ դիվիդենդներ շահեն, մեր ուշադրությունը շեղեն բուն պրոբլեմներից ու կառավարելի դարձնեն հայ հասարակությանը: Մասնագետի մեկնաբանմամբ՝ հայերը թեեւ շատ հանդուրժող են, սակայն բազմազանություն կոչվածը մշակութային երեւույթ չէ, մերձմշակութային է, իսկ դրա նկատմամբ հանդուրժողականություն պահանջելը աբսուրդ է: «Էդպես լինի՝ պիտի հանդուրժող լինենք նաեւ աղանդավորների, կրիմինալի ու գողական աշխարհի նկատմամբ, որը իր լեքսիկոնն ունի, իր հարաբերությունների ձեւը, վարքականոնը, օրենքները: Սրանք եւս մերձմշակութային երեւույթ են: Փառք ու պատիվ էն մարդուն, ով որոշել է ապրել գողական վարքականոնով, դա հ՛ր որոշումն է, հ՛ր ազատությունն է, բայց ինքը չի կարող պարտադրել հանդուրժողականություն իր նկատմամբ, իր վարքականոնի նկատմամբ: Եթե մարդը ընտրություն է կատարել, քավ լիցի, չեմ էլ դատապարտում, չի կարելի, որ դու քո ընտրությունը պարտադրես ինձ ու պահանջես հանդուրժողականություն քո մերձմշակույթի նկատմամբ, դու մշակութային երեւույթ չես, այլասերում ես, իսկ դա նշանակում է՝ այլից սերված: Այն, ինչ իմ ազգայինը չէ, իմ հասարակությանը չի պատկանում, դա այլասերված է, դրա անունը ինչ ուզում եք դրեք՝ սեքսուալ փոքրամասնություն, աղանդներ, ինչ ուզում եք՝ դրեք, ինքը մշակույթ չէ, հետեւաբար էստեղ խոսելով բազմազանության մասին՝ ուզում են մեր աչքին թոզ փչել»,- ասում է հոգեբանը.



Ըստ նրա՝ Արեւմուտքը պարտադրում է հանդուրժողականություն՝ իրականում այդքան էլ լավ չհասկանալով այդ բառի իմաստը: «Այդ հասկացությունն այնքան է ծանրաբեռնվել, որ ըստ էության Արեւմուտքում էլ հիմա այդքան լավ չեն հասկանում, թե ինչ է նշանակում տոլերանդություն, որովհետեւ տոլերանդության վրա լցվեց էնքան բովանդակություն, որ նույն հասկացությունը իր մեջ հակադիր բեւեռներ է ներառում: Օրինակ՝ ասենք, բժշկագիտության մեջ տոլերանդությունը գնահատվում է որպես օրգանիզմի անընդունակություն, սա հիմնականում քննարկվում է օրգանների տրանսպլանտացիայի պարագայում, օրգանների պատվաստման խնդրի հետ է կապված, կամ ասենք՝ այս կամ այն ներմուծված հակամարմնի: Իմ օրգանիզմի իմունային համակարգը վաղ թե ուշ կհայտնաբերի պատվաստված օրգանը ու կպայքարի դրա դեմ՝ ոչնչացնելու, հեռացնելու համար, որովհետեւ խախտվել է իմ օրգանիզմի ամբողջականությունը: Հիմա, եթե իմ օրգանիզմը չի տեսնում ներմուծված օրգանը, հենց դա կոչվում է տոլերանդություն, այսինքն՝ ես անընդունակ եմ սինթեզելու հակագեն: Որպեսզի տրանսպլանտացիայի ժամանակ վիրահատությունը հաջող ընթանա, եւ նույնիսկ հաջող էլ որ չընթանա, ես ամբողջ կյանքում ստիպված եմ օգտագործել դեղորայք, որը իջեցնում է իմ իմունային շեմը, որպեսզի ես այդ օրգանը չտեսնեմ: Այսինքն՝ ստեղծում են տոլերանդություն, իսկ այս պարագայում հանդուրժողականությունը բացասական երեւույթ է, անընդունակություն է»,- մասնագիտորեն փորձեց բացատրել հոգեբանը:

Ըստ նրա՝ ազգային օրգանիզմի դեպքում նույն բանն է կատարվում. եթե առանց հաշվարկելու ինչ-որ արհեստական արժեք են պատվաստում, ապա վաղ թե ուշ ազգային օրգանիզմը հակազդելու ու ոչնչացնելու է այդ արժեքը, կամ ընդհակառակը՝ արժեքը կոչնչացնի ազգային օրգանիզմը. «Մենք միշտ սպառնալից ենք մոտեցել ազգապահպանության խնդրին, ես չեմ ասում՝ դրանք վատն են, դրանք ուղղակի իմը չեն, հարգելի արեւմտյան գործիչներ, հասկացեք, եւ չի կարելի հենց էնպես վերցնել ու անհաշվենկատորեն պարտադրել ինձ: Իսկ եթե այս ամենը գիտեք ու չարամտորեն եք անում, սպանում եք իմ ազգային օրգանիզմը»: Իսկ այսօր մեր ժողովուրդը, ըստ մասնագետի, գտնվում է «մասսայական պսիխոզ վիճակում, խոցելի է, հազար ու մի տեսակ խնդիրներ ունի՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական, եւ Արեւմուտքից պարտադրվող այս կասկածելի արժեքները անչափ վտանգավոր են»:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

---

## «Արմենտել»-ը աջակցում է Հայաստանի հավաքականի երկրպագուների շարժմանը



«Արմենտել»-ը եւ «Առաջին Հայկական ճակատ» երկրպագուների շարժում հ/կ-ն (First Armenian Front, FAF) հայտարարում են համագործակցության մեկնարկի մասին, որի շրջանակում ընկերությունը կաջակցի կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումներին:

«Արմենտել» ընկերությունն իրականացնում է բազմաթիվ ծրագրեր՝ աջակցելով կրթությանը, բարձր տեխնոլոգիաների ներդրմանը, ստեղծարարությանը, սպորտին եւ ազգային արժեքների պահպանմանը: Համոզված եմ, որ ազգային հավաքականի հավատարիմ երկրպագուներն այն մարդիկ են, որոնք ցավում են ոչ միայն թիմի, այլեւ իրենց երկրի համար: Այդ պատճառով էլ մենք որոշեցինք սատարել FAF շարժմանը, որը միավորում է տարբեր մարդկանց եւ ձեւավորում երկրպագելու մշակույթ: Հուսով ենք, որ մեր աջակցությամբ այդ շարժումն ավելի մասշտաբային կդառնա»,- նշեց «Արմենտել» ՓԲԸ գլխավոր տնօրեն Իգոր Կլիմկոն:

«Առաջին անգամ հայաստանյան ֆուտբոլի երկրպագման պատմության մեջ տեղի է ունենում խոշոր ընկերության եւ մեր ազգային հավաքականների երկրպագուների ակումբի՝ ՖԱՖ-ի միջեւ համագործակցություն: «Առաջին Հայկական ճակատ» երկրպագուների ակումբի անունից շնորհակալություն եմ հայտնում «Արմենտել» ընկերությանը մեր նախաձեռնություններին սատարելու եւ մեր երկրի ազգային հավաքականի երկրպագուներին աջակցելու համար»,- ասաց FAF հիմնադիր անդամ, կազմակերպության ղեկավար Խորհրդի անդամ Էդգար Պետրոսյանը: «Առաջին Հայկական ճակատ» ֆան-ակումբը հիմնադրվել է 2007թ. եւ միավորում է երկրպագուներին՝ Հայաստանից եւ Սփյուռքից:

## Աջափնյակի մի մասը կջրազրկվի

«Երեւան Ջուր» ընկերությունը իր հաճախորդներին եւ սպառողներին տեղեկացնում է, որ, վթարի վերացման աշխատանքների հետ կապված, ս.թ. մայիսի 31-ին, ժամը 10.00-22.00-ը, կդադարեցվի Աջափնյակ վարչական շրջանի Գ-1, Նազարբեկյան թաղամասերի եւ հարակից տարածքների ջրամատակարարումը: Ընկերությունը հայցում է սպառողների ներողամտությունը պատճառված անհանգստության համար եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար:

«Երեւան Ջուր» ՓԲԸ

---

# Թերսնումն ու սթրեսներն էլ են նպաստում շաքարային դիաբետի աճին

Այսօր հանրապետությունում գրանցված է շաքարային դիաբետով հիվանդ 400 երեխա, եւ տարեցտարի նրանց թիվն աճում է: Երեկ «Տեսակետ» ակումբում այս մասին հայտնեց Հանրապետական էնդոկրինոլոգիական մանկական դիսպանսերի ղեկավար Ելենա Աղաջանովան: Բժշկի խոսքերով՝ պատճառները տարբեր են՝ սկսած ժառանգականությունից մինչեւ մուտացիայի ենթարկված գեն:

«Առավոտի» հարցին, թե որոշ մասնագետների հավաստմամբ՝ շաքարային դիաբետը նաեւ սոցիալական հիվանդություն է, այսինքն՝ դրա առաջացմանը նպաստում են թերսնումը, սթրեսները եւ աղտոտված շրջակա միջավայրը, տիկին Աղաջանովան պատասխանեց. «Հիվանդությունն ամբողջ աշխարհում երիտասարդացել է, հատկապես՝ շաքարային դիաբետով հիվանդանում են մինչեւ 5 տարեկան երեխաները: Սակայն գիտնականները մինչ օրս դիաբետի առաջացման բուն պատճառը չեն հայտնաբերել: Բայց բոլոր այդ գործոնները՝ թերսնումը, էկոլոգիան, սթրեսները նպաստում են, որպեսզի գենը մուտացիայի ենթարկվի»:

Տիկին Աղաջանովայի ներկայացմամբ՝ երեխաների մոտ կա շաքարային դիաբետի 2 տիպ: Առաջինը ինսուլինի բացարձակ անբավարարությունն է, այսինքն՝ ինսուլին արտադրող բջիջներն ամբողջությամբ քայքայված են: Մյուսը օրգանիզմում ինսուլինի նվազ քանակությունն է: Բոլոր դեպքերում էլ այդ երեխաները պետք է սահմանված ժամին եւ սահմանված չափաքանակով ինսուլին ստանան: Պատահում է, որ պետպատվերով երեխաներին հատկացվող այդ դեղի ներկրումը ուշանում է, եւ ծնողները ստիպված են լինում ինսուլինը դեղատներից ձեռք բերել, որի մեկ տուփի արժեքը սկսվում է 5000 դրամից: Այս առնչությամբ էնդոկրինոլոգը նշեց, որ միայն այս խնդիրը չէ, որ առկա է: Ըստ նրա՝ քանի որ շաքարային դիաբետն այն հիվանդությունն է, որը մարդուն ուղեկցում է ողջ կյանքի ընթացքում, ուստի դիաբետիկը հետագա բուժումը ստանում է տնային պայմաններում:

Տիկին Աղաջանովայի խոսքերով. «Պետությունը չի կարողանում ապահովել այն սարքավորումները՝ գլյուկոմետրը, ստրիպերը, որոնց միջոցով ինսուլինի չափաքանակը ներարկելուց առաջ պետք է որոշեն արյան մեջ շաքարի քանակը, դրանք թանկ արժեն»:

Ասուլիսին ներկա «Երազ» բարեգործական ընկերության ղեկավար Կարինե Մխիթարյանը վստահեցրեց, որ տեղացի բարեգործների միջոցներով իրենց ընկերությունը փորձում է լուծել այդ խնդիրը: Ըստ նրա՝ իրենք օգնում են Արցախի եւ Ջավախքի երեխաներին նույնպես:

ԼՈՒՍԻՆԵ ԲՈՒԴԱՂՅԱՆ

---

## Բնակիչները «Ամստերդամի» գիշերային «ծիտիկներից» ազատվեցին

«Ամստերդամ» կարաոկե-բար ակումբը փակվել է բնակիչների՝ տարիներ տեւած պայքարից հետո: Հանրապետության 67/1 հասցեում նախկինում գործող ակումբը մի քանի տարի, ամեն գիշեր, բնակիչների խոսքերով՝ վերածվում էր «ռազմի դաշտի»: Բանն այն է, որ կեսգիշերից հետո «Ամստերդամի» հարբած այցելուները, ինչպես ակումբի գովազդում է ասվում՝ «խելահեղ ռիթմերն» ու «վայելքների աշխարհը» տեղափոխում էին փողոց: Բնակիչների խոսքերով՝ «Ամեն օր ժամը 24.00-ից հետո ստիպված էինք լսել ակումբի հաճախորդների հայհոյանքներն ու գոռգոռոցները: Հատկապես ամռանն անտանելի էր լինում այդ ամենը, քանի որ գիշերները պատուհանները բաց են լինում, ու հենց քթներիս տակ էդ հարբած հաճախորդների լկտի հայհոյանքներն էին լսվում: Հաճախ լուսադեմին լսում էինք, թե ինչպես է «խաբված հայ ծիտիկը» նույնիսկ տղամարդկանց անհայտ ոճի հայհոյանքների տարափ լցնում իրեն «քցողների» վրա: Ու այս ամենը «վայելում էին» անչափահաս երեխաները, կանայք եւ ծերերը»:

Ակումբը 24-ժամյա աշխատանքի թույլտվություն ուներ, իսկ բնակիչների այն պահանջը, որ վերացվեն ակումբի հաճախորդների գիշերային խուլիգանություններ, ոստիկանությունը պարզաբանել էր, որ գիշերային հսկողություն է իրականացվում: Սակայն, ըստ բնակիչների, դա էլ չէր փրկում դրությունը. «Քանի որ «Ամստերդամի» հաճախորդներն էն կլասի մարդիկ էին ու այնպիսի բաներ էին իրենց թույլ տալիս, որ երբեմն ոստիկաններն էին անվտանգության կարիք ունենում»:

Արդեն մի քանի օր է՝ բնակիչները գլուխները հանգիստ բարձին են դնում, իսկ տարածքը հսկող ոստիկանները հանգիստ շունչ են քաշում. ակումբից հետք էլ չի մնացել, այն փակվել է, իսկ նույն տեղում առեւտրի կենտրոն է բացվելու:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

Առավոտ daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 31.05.2012

# ԱՄՆ պետդեպարտամենտը՝ Ստեփան Հովակիմյանի գործով



«Մոսկվա» կինոթատրոնում 2010թ. հունվարին տեղի էր ունեցել գողություն: 5 մլն դրամ էր պակասել դրամարկղից: Կենտրոնի ոստիկանության բաժին տարվեցին Ստեփան Հովակիմյանն ու Վահրամ Քերոբյանը: Ստեփանը խոշտանգումների արդյունքում տվեց ինքնազրպարտիչ ցուցմունքներ, որոնք դրվեցին մեղադրանքի հիմքում: Մայիսի 30-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում նշանակվել է հերթական դատական նիստը: Ստեփան Հովակիմյանի եւ Վահրամ Քերոբյանի պաշտպանները բացարկ են հայտնել նախագահող դատավոր Մխիթար Պապոյանին: Մինչ դատաքննությունը, տեղեկացանք, որ ԱՄՆ պետդեպարտամենտն իր վերջին զեկույցում անդրադարձել է այս գործին:

«Չնայած օրենքն արգելում է նման գործելակերպը, անվտանգության ուժերը պարբերաբար շարունակել են այդպես վարվել: Վկաները հայտնում են, որ ոստիկանները ծեծել են քաղաքացիներին ձերբակալության եւ հարցաքննության ժամանակ: Իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները (ՀԿ) պատրաստել են նմանատիպ հայտարարություններ, սակայն նաեւ նշում են, որ ոստիկանության վատ վերաբերմունքի շատ դեպքեր չեն հայտարարվում, հետապնդումների վախից: Ըստ իրավապաշտպան կազմակերպությունների, շատերը, ովքեր տեղափոխվել են բանտ ոստիկանությունից, հայտարարել են, որ, ցուցմունքներ կորզելու նպատակով, ոստիկանությունում ենթարկվել են խոշտանգումների, ճնշումների կամ սպառնալիքների: Հայտնել են, որ չարաշահումները հիմնականում տեղի են ունեցել ոստիկանության բաժանմունքներում, որտեղ չկա հասարակական հսկողություն, բայց ոչ բանտերում կամ ոստիկանության ժամանակավոր ազատազրկման կառույցներում, որոնք հսկվում են»:

Պետդեպը նաեւ արձանագրում է. «Օրինակ, մայիսի 17-ին Քաղաքացիական հասարակության ինստիտուտը կոչ է արել արդար դատավարություն իրականացնել Ստեփան Հովակիմյանի եւ Վահրամ Քերոբյանի գործով, ովքեր պնդում են, որ Երեւան քաղաքի կենտրոնում գտնվող կինոթատրոնի գողության վերաբերյալ խոստովանությունը գրվել է ոստիկանությունում շարունակական ֆիզիկական եւ հոգեբանական բռնության ենթարկվելու արդյունքում: Քաղաքացիական հասարակության ինստիտուտը պահանջել է անկախ հետաքննություն իրականացնել ամբաստանյալների խոշտանգումների մասին հայտարարությունների վերաբերյալ եւ վերջ դնել գործի հիմքում միայն ինքնախոստովանական ցուցմունքներ դնելու պրակտիկային: Ըստ փաստաբանի, Հովակիմյանը մի քանի անգամ անօրինական տարվել է Երեւանի Կենտրոն համայնքի ոստիկանության բաժանմունք եւ ենթարկվել է ֆիզիկական եւ հոգեբանական բռնության՝ խոստովանություն կորզելու նպատակով: Հովակիմյանը խոստովանել է այն բանից հետո, երբ ոստիկանները սպառնացել են սեռական ոտնձգություններ կատարել եւ «բերել» իր ընկերուհուն: Ըստ փաստաբանի, գողության ենթադրյալ տուժողը հաղորդում է ներկայացրել հանցագործության վերաբերյալ միայն այն բանից հետո, երբ Հովակիմյանը խոստովանել է, այսինքն՝ ոստիկանությունը իրականացրել է հետաքննությունը նախքան հանցագործության մասին հաղորդում կազմելը»:

Ինչ վերաբերում է հետաքննությանը, ապա Պետդեպը արձանագրում է. «Դիտորդները պնդում են, որ խոշտանգումների հայտարարության վերաբերյալ իրականացված հետաքննությունը անարժանահավատ է, իսկ դատարանը անտեսում է Հովակիմյանի հայտարարությունները, որ այդ խոստովանությունը ստացվել է խոշտանգումների արդյունքում»:

Հիշեցնենք, որ այս գործը Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում է շուրջ 22 ամիս, փոխվել են մեկ դատավոր, պաշտպաններ, իսկ սայլն առաջ չի գնում: Կալանքի տակ պահելու ողջամիտ ժամկետն անգամ անցել է:

Ռ. Մ.

## Գյումրին՝ դարձյալ «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի ուշադրության կենտրոնում

Նոր հեռանկարներ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) Գյումրիի մասնաճյուղի ուսանողների համար: «ՎիվաՍել-ՄՏՍ»-ը՝ տեղեկացնում է, որ ընդառաջ է գնում պահանջված կադրեր պատրաստելու ՀՊՏՀ Գյումրիի մասնաճյուղի ցանկությանը: Այս կամ այն բուհի գործունեության հաջողությունը բացահայտվում է պատրաստած մասնագետների հանդեպ դրսեւորվող պահանջարկով: Մրցունակ կադր համարվելու նշաձողը սահմանում է շուկան: Կրթության համակարգում ժամանակակից մեթոդների ներդրման «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի պատրաստակամությունը բխում է ոչ միայն բուհերի, այլեւ՝ գործատուների շահերից:

Գյումրեցի ապագա տնտեսագետներին տրամադրված ժամանակակից տեխնիկան կարեւոր դեր կունենա նրանց մասնագիտական հեռանկարների առումով: ՏՏ ու համացանցի ընձեռած ահռելի տեղեկատվության առկայությունը մեթոդական հարուստ նյութ կապահովեն նաեւ պրոֆեսորադասախոսական կազմի համար:

Եվրոպական կրթական համակարգին ինտեգրման գործընթացին ընդառաջ՝ Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորը ՀՊՏՀ Գյումրիի մասնաճյուղը համալրել է ինտերնետ հասանելիությամբ 10 համակարգչով ապահոված լսարանով, «Home-Zone Turbo» փաթեթի շրջանակներում գործող՝ 3G երթուղիչով, լազերային տպիչով, փոխանջատիչներով եւ այլ սարքերով: Համալսարանում կգործի նաեւ Wi-Fi անկյուն: Ուսումնական գործընթացի պահանջներից բխող արժեքավոր սարքերից առանձնահատուկ կարեւորություն ունի լուսարձակով ինտերակտիվ գրատախտակը: Այն տեղեկատվական մեծ հոսքերի տիրապետելու եւ դասաորոցեսը լիարժեք կառավարելի դարձնելու հրաշալի գործիք է դասախոսների համար: Ուսումնական նյութի մատուցման ինտերակտիվ գրատախտակը թույլ է տալիս կարճ ժամանակահատվածում տիրապետելու առավելագույն գիտելիքների: «Գյումրիի տնտեսագիտական համալսարանը թվով չորրորդն է այն 29-ը բուհից, որոնք ընդգրկված են կրթական լաբորատորիաների ստեղծման մեր ծրագրերում: Բարձրագույն որակյալ կրթության համար ստեղծված այս պայմանները կարեւոր են մեր խելացի ուսանողներին աջակցելու առումով: Խորացված դասընթացների ժամանակակից մեթոդը նրանց թույլ կտա ետ չմնալ դարի գիտատեխնիկական առաջընթացից, կրճատել տարածությունը եւ համագործակցել առաջատար բուհերի հետ: Եղել եւ մնալու ենք Ձեր կողքին»,- ընդգծել է «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

# Մարգար Օհանյանին՝ 6 տարի



Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մխիթար Պապոյանը երեկ հրապարակեց ճանապարհային ոստիկանության նախկին պետ Մարգար Օհանյանի եւ մյուսների գործով դատավճիռը: Մարգար Օհանյանը դատապարտվեց 6 տարի ազատազրկման՝ առանց գույքի բռնագրավման, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը թողնվեց անփոփոխ: Պատժի սկիզբը հաշվվեց 2011թ. օգոստոսի 30-ից:

Սպայական գումարտակի հրամանատար Ստեփան Կարախանյանը դատապարտվեց 5 տարի 11 ամիս 27 օր ազատազրկման՝ առանց գույքի բռնագրավման: Նշանակված պատիժը պայմանական չի կիրառվի, կկիրառվի 5 տարի փորձաշրջան: ճՈ տնտեսական բաժնի պատասխանատու Արա Լեւոնյանը եւ տեխնիկ Սամվել Մախմուրյանը դատապարտվեցին 5,5 տարի ազատազրկման՝ առանց գույքի բռնագրավման, 4 տարի փորձաշրջանով: Վերջին երեքի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, մնաց անփոփոխ:

Ճանապարհային ոստիկանության աշխատակիցներից հօգուտ Հայաստանի Հանրապետության կբռնագանձվի 82 հազար 440 դրամ: Դատարանը վճռեց վերացնել Մարգար Օհանյանի գույքի վրա դրված կալանքը:

Դատաքննությունից հետո Մարգար Օհանյանի փաստաբան Մկրտիչ Վասակյանն ասաց, որ խիստ էր նշանակված պատիժը, բոլոր հիմքերը կային պատիժը պայմանական չկիրառելու համար: Իսկ այն հարցին, թե բողոքարկելո՞ւ են վճիռը, ասաց, որ խորհրդակցելու է իր պաշտպանյալի հետ:

Ռ. ՄԻՆԱՍՅԱՆ

# Հարուցվել է քրեական գործ՝ «Հետքի» հրապարակումից հետո

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժին բերման ենթարկված Անտոնիո Կավեի անձնական խուզարկությամբ հայտնաբերված առանձնապես խոշոր չափերի գույքի հափշտակության դեպքի առթիվ:

2012թ. մարտի 20-ին «Հետք» ինտերնետային կայքում հրապարակվել էր Իտալիայի քաղաքացուց առգրավված մոտ 10 000 ԱՄՆ դոլար գումարի՝ ՀՀ ոստիկանության Արաբկիրի քննչական բաժնից անհետանալու մասին հոդված:

Այդ կապակցությամբ ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքում պարզվել է, որ 2011թ. հոկտեմբերի 14-ին խարդախություն կատարելու կասկածանքով ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժին բերման է ենթարկվել Իտալիայի Հանրապետության քաղաքացի Ա. Կավեն:

Վերջինիս անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է 1 460 000 ՀՀ դրամ, 2 400 ԱՄՆ դոլար եւ 1 800 եվրո գումար: Հայտնաբերված գումարն այլ անձնական իրերի հետ փաթեթավորվել է մեկ փաթեթում եւ նախապատրաստված նյութերի հետ նույն օրն ուղարկվել ՀՀ ոստիկանության Արաբկիրի քննչական բաժին: Նախապատրաստված նյութերի հիման վրա հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, որի նախաքննությամբ հաջորդաբար զբաղվել են ոստիկանության նույն բաժնի քննիչներ Ս. Վարանցովյանը, Մ. Գրիգորյանը եւ Պ. Բադալյանը:

Պ. Բադալյանը 2011թ. դեկտեմբերի 30-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկել է Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:

Մարտի 6-ին՝ դատավճիռ կայացնելուց հետո, դատարանում պարզվել է, որ Ա. Կավեից առգրավված իրերի միջից վերոհիշյալ գումարը բացակայում է:

Նկատի ունենալով, որ նյութերում առկա են ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված՝ յուրացման եղանակով ուրիշի գույքի՝ առանձնապես խոշոր չափերով հափշտակության հատկանիշներ՝ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ: Նախաքննությունը շարունակվում է:

# «Խորանին» հետեւողներն ու զոհերը

## Հոգեւորականի եւ Միացյալ երիտասարդական լիգայի ներկայացուցիչների մեկնաբանությունները

Իսպանիայի հայերի ճակատագրով մտահոգ հայ համայնքները վերջերս բաց նամակ էին հղել ՀՀ բարձրագույն մարմիններին եւ շուրջ 60 տարբեր կազմակերպություններին՝ «Խորան» աղանդի դեմ համապատասխան միջոցներ ձեռնարկելու խնդրանքով: Նրանք դիմել են նաեւ Միացյալ երիտասարդական լիգային (ՄԵԼ): «Առավոտի» հետ զրույցում վերջինիս համանախագահ Դանիել Պետրոսյանը նշեց, որ Ավստրիայի հայ համայնքը տարբեր սոցիալական կայքերից տեղեկացել է «Խորանի» ղեկավարներ՝ տեր եւ տիկին Հրաչյա եւ Գայանե Խաչատրյանների գործունեության մասին եւ Ավստրիայի Հայ առաքելական եկեղեցու հովիվ տեր Անդրեաս Իսախանյանի գլխավորությամբ հանդես եկել բաց նամակով՝ ի զորակցություն ՄԵԼ-ի պայքարի. «Իսպանիայի հայ համայնքին է սատարել նաեւ Չեխիայի հայ համայնքը: «Խորանից» շատերն են տեղյակ. դրա դեմ դուրս եկողներին «պատահաբար» դժբախտություններ են պատուհասել»,- հայտնեց Դ. Պետրոսյանը: Ըստ ՄԵԼ-ի տրամադրած տեղեկատվության՝ Վալենսիայի հայ համայնքի ներկայացուցիչները հայտնել են, որ Հրաչյա Խաչատրյանն իր աղանդի մեջ է ներքաշել Լուսինե անունով աղջկա եւ դրդել, որ վերջինս ցուցմունք տա իր իսկ ամուսնու դեմ՝ նրան մեղադրելով բռնության մեջ: Սակայն իրական պատճառը եղել է ամուսնու՝ կնոջն աղանդից հեռացնելու զուր ջանքերը: Արդյունքում ամուսինները բաժանվել են, իսկ ամուսինը՝ Ժորան, դեռ գտնվում է ազատազրկման մեջ:

Նամակում նաեւ ասվում է, որ Հ. Խաչատրյանը պատվազրկել է Լիլիթ անունով մի աղջկա, հետո, փորձելով խնդիրը հարթել, նրան ամուսնացրել է «Խորանի» անդամներից մեկի՝ Սաշայի հետ: Դեպքի մասին իմացել են Սաշայի ծնողները եւ երիտասարդին մի կերպ «պոկել» «Խորանից»՝ տանելով Գերմանիա:



ՄԵԼ համանախագահ Սեւակ Հովհաննիսյանը հայտնեց, որ ներկայումս Կոլլերայում բնակվում է «Խորանի» զոհերից Սերգո անունով հայ երիտասարդը, որը հոգեկան խանգարում է ստացել իրեն 4-րդ հարկից ցած նետելու պատճառով: «4 տարի առաջ Արմեն անունով մի երիտասարդ ընկերների հետ փորձել է պայքարել «Խորանի» դեմ, բայց մի քանի օր հետո ավտովթարի է ենթարկվել Կոլլերա-Սուեկա ավտոմայրուղում»,- պատմում է Ս. Հովհաննիսյանը:

Ըստ ՄԵԼ-ի ներկայացուցիչների, Վալենսիայի հայ համայնքի ներկայացուցիչները նշել են, որ աղանդավորներից վերցված թանկարժեք զարդերը այժմ վաճառվում են Երեւանի ոսկու շուկայում՝ Խաչատրյանի աներձագի՝ Ռուդիկ Հարությունյանի կողմից:

Ռուսաստանի հայերը նույնպես սատարել են ՄԵԼ-ին: Նրանց նամակում էլ ասվում է, որ Խաչատրյանն ու նրա կինը թմրեցնող դեղամիջոցներ են տալիս «Խորանի» անդամներին՝ ներշնչելով, թե ցանկացած պահի Հիսուսը կիջնի նրանց ետեւից, եւ նրանք կթռչեն երկինք, դրանից հետո մարդիկ դիմում են ինքնասպանության: «Բացի այդ, յուրաքանչյուր շաբաթ նրանք տարբեր փոստարկղերից արգելված գրականություն են տարածում՝ ուղղված Հայ առաքելական եկեղեցու եւ հայկական ավանդույթների դեմ»,- հայտնում է Ս. Հովհաննիսյանը:

Խնդրի շուրջ Կոմիտաս վարդապետ Հովնանյանն էլ «Առավոտի» հետ զրույցում փաստեց, որ Քրիստոսը երբեք չի խոսել ինքնասպանության մասին. «Պետրոսն ուրացավ Քրիստոսին, բայց ինքնասպանություն չգործեց: Մենք Հուդային չենք ներում, որովհետեւ մեղք գործելուց ոչ թե զղջաց՝ վերադարձավ, այլ ինքնասպան եղավ... Ինչպե՞ս կարող էր մեղքերից ազատող Քրիստոսն ինքնասպանություն քարոզել»:

Խոսելով «Խորանի» գործունեությունից Հայաստանում՝ Սեւակ Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ այստեղ կառույցը չունի այն լծակները, ինչ Իսպանիայում. «Վալենսիայի հայերն ասում են, որ Խաչատրյանը սերտ կապերի մեջ է Իսպանիայի ոստիկանության հետ: Հայաստանում «Խորանը» նույնն է անում, ինչ Իսպանիայում՝ այն տարբերությամբ, որ չի կարողանում ուզածի չափ թալանել: Առհասարակ, «Խորանը» առաջնորդների համար դարձել է ընտանեկան բիզնես»: Հարցի վերաբերյալ Կոմիտաս վարդապետն ասում է. «Աստվածաշունչն ասում է՝ զգույշ եղեք սուտ մարգարեներից, որոնք ձեզ մոտենում են ոչխարների զգեստներով, բայց ներսից հափշտակող գայլեր են: Տուժածները մեղավոր են այնքանով, որ գնում են ամեն պատահածի ետեւից»:

Ինչ վերաբերում է Սեւակ Հովհաննիսյանին, նշում է. «Ինձ սպառնացել են ու ասել, թե՝ դեսպանատան միջոցով ձեզ հանելու ենք «տռաս»: Նաեւ ակնարկել են այն մասին, որ «Խորանը» գրանցված միջազգային քրիստոնեական եկեղեցի է»:

Խոսելով միջազգային քրիստոնեական եկեղեցիներից՝ Կոմիտաս վարդապետը հավելում է. «Եկեղեցու ձեւավորման համար հարկավոր է կոնկրետ ուսմունք, որը պետք է ունենա իր հստակ դավանանքը: Իսկ խարիզմատիկ եկեղեցին հստակ գաղափարախոսություն չունի: Դրա շարժումներից ոչ մեկը լուրջ հիմքեր չունի, քանզի դավանանքը չկա, որի շուրջ ձեւավորվում է պաշտամունքը: Սովորաբար, դավանանք չունեցող եւ կրոնական կառույցի անվան տակ հանդես եկող կազմակերպություններն իրականացնում են այլ նպատակներ»: Հոգեւորականը նաեւ հավելում է, որ եկեղեցիների համաշխարհային խորհուրդը գրանցում է այն կառույցներին, որոնք ընդունում են Աստվածաշունչը եւ Սուրբ Երրորդությունը. «Բայց այդ կերպ յուրաքանչյուր եկեղեցի կարող է գրանցվել, քարոզել, բայց զբաղվել այնպիսի գործունեությամբ, ինչպիսին այս պարագայում է: Շահույթ հետապնդողներն ամեն ինչ անում են՝ Առաքելական եկեղեցին արժեզրկելու համար: Ով ինչ ուզում, գալիս՝ բարբաջում է»:

Նրա խոսքով՝ մարդիկ կառավարելի եւ ենթարկվող են դարձել, քանի որ կորցրել են իրենց ազգային դեմքն ու հավատքը. «Այսօրվա մարդու համար հավատը դադարել է խորհուրդ լինելուց եւ վերածվել է շոուի: Աղանդավորական կառույցների ներսում հենց շոուն է գործում՝ երգ, աղմուկ, աղաղակ, շարժումներ, ցատկոտել, իբրեւ թե էքստազի մեջ ընկնել, տարբեր լեզուներով խոսել... Դա ցուցադրություն է: Հոգեգալստյան ժամանակ յուրաքանչյուր առաքյալ խոսում էր այն երկրի լեզվով, որտեղ պետք է գնար քարոզելու, իսկ իրենք չգիտես ինչ են ասում, մեկն էլ «թարգմանում» է, թե Սուրբ հոգին այսինչ բաներն ասաց: Սուրբ հոգով ներշնչված մարդն աննպատակ չի խոսի»:

Սեւակ Հովհաննիսյանի հասցեին ուղղված սպառնալիքների շուրջ էլ հոգեւորականը նշեց, որ չկա քրիստոնեության ներկայություն այն դեպքում, երբ «սեր քարոզող» եւ «Քրիստոսին հետեւող» մարդը սպառնում է ուրիշի կյանքը խլել:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

# Անգլիացի գործարարը գնել է «Medoff» ապրանքանիշը

## Բրիտանացի բիզնեսմեն Նիլ Սմիթը, ով «Eastern Beverage Company S A » ընկերության (Լյուքսեմբուրգ) սեփականատերն է, հայտարարեց TM «Medoff» (Ուկրաինա) ապրանքանիշի ձեռքբերման գործարքի ավարտի մասին:

Նիլ Սմիթը ներդրումային բնագավառում հայտնի ֆինանսիստ է, Քեմբրիջի համալսարանի մագիստրոս, ով վերջերս իր ուշադրության կենտրոնում է պահում նախկին ԽՍՀՄ շուկայում առկա ներդրումային ծրագրերը:

Նա իր պրոֆեսիոնալ կարիերան սկսել է 1996 թվականին՝ որպես «DELLOITTE» ընկերության հաշվապահ: Հետագայում հիմնել է մի շարք հաջողված հիմնադրամներ, այդ թվում՝ «Morley G7 Fixed Income Fund» հիմնադրամը: Նա նաեւ հիմնել է «Benchmark Plus» եւ «Morley» համատեղ ձեռնարկությունը, եւ հիմնադրել է Եվրոպայի ամենաարդյունավետ հիմնադրամներից մեկը՝ «Aviva Alpha Optimum Fund»-ը: 27 տարեկանում նա գլխավորել է Մեծ Բրիտանիայի խոշորագույն եւ իր մեծությամբ աշխարհի 5-րդ՝ «Morley Fund Management» ապահովագրական խմբի այլընտրանքային ներդրումների հետ աշխատող վարչությունը եւ պատասխանատու էր հաճախորդների ավելի քան $6 մլրդ-ի հասնող դրամական միջոցների համար: 2004 թ -ին Նիլը հիմնեց «Gyre Capital Management»-ը, 2006-ին՝ «Florin Advisers»-ը՝ որպես «Gyre Capital Management»-ի ստորաբաժանում: Ներկայումս նա «Eastern Beverage Company S A » ընկերության (Լյուքսեմբուրգ) սեփականատերն է:




«Medoff»-ը մեծ եւ կարեւոր ձեռքբերում է: Վստահ եմ, որ այս ապրանքանիշը միջազգային շուկայում ունի մեծ հնարավորություններ, այդ պատճառով ես լուրջ մտադրված եմ զարգացնել այն եւ շատ եմ հետաքրքրված դրա հաջողությամբ»,- հայտարարեց «Eastern Beverage Company S A » ընկերության (Լյուքսեմբուրգ) սեփականատերը:

2012-ի գարնանը ապրանքանիշը ոչ միայն փոխեց իր սեփականատիրոջը, այլեւ փոխեց իր արտաքին տեսքը: Դա պարզապես դիզայնի փոփոխում չէր, այլ լիովին նոր եւ առաջադեմ մոտեցում օղու արտաքին տեսքին, ինչը կեղծիքներից պաշտպանվելու լրացուցիչ հնարավորություն է: Եթե առաջ շիշը քառակուսի էր, ապա այժմ այն ձեւավոր է՝ օրիգինալ դիզայնով: Անխոս, նորարար լուծում է նաեւ «MEDOFF» շշի ուռուցիկ փականի եւ պիտակի թանկարժեք ձեւավորումը, որը 100% պաշտպանություն երաշխավորող լրացուցիչ էլեմենտ է: Բացի այդ, շշի բոլոր բաղադրամասերն այժմ ունեն լրացուցիչ պաշտպանություն: Փականն առաջին անգամ բացելիս հայտնվում է կարմիր ժապավեն, ինչը նշանակում է, որ խմիչքը կեղծված չէ, իսկ I-TouchTM էֆեկտով արտոնագրված պիտակը, որը նաեւ դիզայնի նորաոճ էլեմենտ է, շոշափելիս սպառողին պարգեւում է հաճելի զգացողություն եւ տարբերում է չկեղծված ապրանքը կեղծից:

Ապրանքանիշի ձեւավոր դաջումը շշի վրա նույնպես դիզայնի շատ բարդ էլեմենտ է, ինչը տնայնագործական պայմաններում հնարավոր չէ պատճենել, եւ լրացուցիչ անգամ հաստատում է, որ օղին արտադրվել է ֆիրմային գործարանում: Բացի այդ, պիտակի վրա պատկերված է ISO համակարգի դրոշմանիշը, ինչը հաստատում է ապրանքի որակի համապատասխանությունը միջազգային չափանիշներին:

«Նոր դիզայնի փիլիսոփայությունն այն է, որ շշի արտաքին տեսքի միջոցով ցույց տրվի TM «Medoff»-ի հայտնի փափկությունը, որը ձեռք է բերվում զտման եւ փափկեցման յուրահատուկ համակարգի օգնությամբ: Օղու արտաքին նոր տեսքի վրա կատարվող քրտնաջան աշխատանքը մեկ տարի շարունակ կատարվել է լավագույն դիզայներների կողմից: Գաղափարի իրականացման համար կիրառվել են շշի արտադրման եւ պիտակի տպման նորագույն տեխնոլոգիաներ»,- մեկնաբանում է Նիլ Սմիթը՝ ապրանքանիշի նոր սեփականատերը:

R

VIVACELL MTS
ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# «Լավ կլիներ, եթե Սեւանը իր հյուրերին նայեր մաքուր ու գեղեցիկ կապույտ աչքերով»

## Պահպանել բնական հրաշքը

Սեւանա լիճը աղտոտման խնդիրը հաղթահարելու ծանր պայքար է մղում տասնամյակներ շարունակ: Լճի սահմանների երկայնքով սփռված քաղաքների եւ գյուղերի չմաքրված կոյուղաջրերն ուղղակիորեն թափվում են այս բարձրադիր բնական հրաշքի ավազան՝ ստեղծելով լուրջ բնապահպանական խնդիր: Կոյուղու ցանցերը եւ կեղտաջրերի մաքրման կայանները, որոնք կառուցվել են դեռեւս խորհրդային տարիներին, ոչ սարքին վիճակում էին գտնվում, քանի որ վատ էին պահպանվել: Վերջերս Հայաստանի իշխանությունները որոշեցին, որ հարկ է ինչ-որ բան անել: Բարեբախտաբար, նրանց ջանքերին աջակից եղավ միջազգային օգնությունը՝ կրճատելու չմաքրված կեղտաջրերի հոսքը լիճ: Սա ԵՄ-ՎԶԵԲ կողմից ֆինանսավորվող «Սեւանա լճի բնապահպանական ծրագիր» նախաձեռնության զեկույցն է:

## Մաքրված կեղտաջրեր՝ ավելի մաքուր լճի համար

1950-ական եւ 60-ական թվականներին կոյուղու ցանցեր եւ կեղտաջրերի մաքրման կայաններ կառուցվեցին լճի մերձակա մի շարք քաղաքներում: Բայց դրանց պահպանումը բարդ էր եւ թանկ, եւ որոշ ժամանակ անց ցանցի խողովակաշարերն այլեւս նորմալ չէին աշխատում: Բացի այդ, մաքրման կայանները չէին կարող աշխատել իրենց առավելագույն ներուժով, երբեմն էլ ընդհանրապես չէին աշխատում: Հայաստանի անկախացումից հետո իրավիճակը շատ ավելի վատացավ. պահեստամասերը դարձան անհասանելի, իսկ գները՝ աստղաբաշխական: Այսպիսով, վերջերս Հայաստանի իշխանությունները որոշեցին, որ հարկ է ինչ-որ բան անել: Բարեբախտաբար, նրանց ջանքերին աջակից եղավ միջազգային օգնությունը՝ կրճատելու չմաքրված կեղտաջրերի հոսքը Սեւանա լճի ավազան:

Սա այն համատեքստն է, որի հիմքի վրա մշակվել է «Սեւանա լճի բնապահպանական նախագիծը»: Ծրագիրը համաֆինանսավորվում է ԵՄ-ի եւ ՎԶԵԲ-ի (Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկ) կողմից՝ աջակցելու կեղտաջրերի մաքրման բարելավման ծրագրին: Ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ Ջրային նախաձեռնության կողմից՝ 5 մլն եվրո դրամաշնորհի տեսքով, որը լրացվում է ՎԶԵԲ-ի 7 մլն եվրո վարկով: Ծրագրում առկա է նաեւ տեխնիկական աջակցության բաղադրիչը, որն աջակցելու է «Հայջրմուղկոյուղի» ընկերության նախագծային աշխատանքներին, նախագծերի եւ ծրագրերի իրականացմանը, ինչպես նաեւ ինստիտուցիոնալ զարգացմանը: Ծրագիրը բաղկացած է կեղտաջրերի մաքրման կայանների կառուցումից Գավառ, Վարդենիս եւ Մարտունի համայնքներում եւ կեղտաջրերի հավաքման ցանցերի բարելավումից Գավառ, Վարդենիս, Մարտունի, Ջերմուկ եւ Սեւան քաղաքներում:



## Նոր կոյուղացանցեր եւ պոմպակայաններ՝ հինգ քաղաքների համար

Նախքան ծրագրի իրականացումը՝ բոլոր 5 համայնքների չմաքրված կոյուղաջրերը ուղղակիորեն հոսում եւ թափվում էին լիճ: «Չմաքրված կոյուղին կարող է լուրջ բնապահպանական խնդիրներ առաջացնել»,- ասում է ՎԶԵԲ ներկայացուցիչ Յոհան Ֆրեդհոլմը: «Իսկ Հայաստանի կառավարությունը ցանկանում էր կրճատել աղտոտումը եւ պաշտպանել լիճը: Դա անելու համար մենք ստիպված էինք աշխատել երկու ճակատներով. ցանց՝ կեղտաջրերը հավաքելու եւ կայաններ՝ այդ կեղտաջրերը մաքրելու համար»: Շինարարական աշխատանքները լավ են ընթանում եւ ներկայումս ցանցը գրեթե պատրաստ է: Ամբողջ ծրագիրը կավարտվի 2012-ի ամռանը, երբ մաքրման կայանները պատրաստ կլինեն:

«Սեւանա լճի շրջակայքի ոչ բոլոր գյուղերն են ներառվել այս նախաձեռնության մեջ»,- ավելացնում է Ֆրեդհոլմը: «Բայց մենք կարողացանք ներառել Սեւանի շրջակայքի ամենամեծ համայնքները՝ ընդհանուր մոտ 80.000 բնակչությամբ, օգտագործեցինք նաեւ ծրագրի իրականացման ժամանակ ձեռք բերված խնայողությունները՝ ներառելու 10.000-ով ավելի շատ մարդ, քան սկզբում էր նախատեսված կոյուղու ցանցի համար: Մենք սա կարող ենք համարել իրական հաջողություն»:

«Ընդհանուր առմամբ, մոտ 30 կմ կոյուղու խողովակաշարեր են փոխարինվել կամ զրոյից կառուցվել»,- ասում է «Հայջրմուղկոյուղի» ընկերության Տեխնիկական տնօրեն Վարդան Մելքոնյանը: «Մոտ 650 դիտահորեր ենք կառուցել, ինչպես նաեւ հինգ պոմպակայաններ»: «Հայաստանի 16 քաղաքներում կեղտաջրերի մաքրման կայաններ կան,- շարունակում է նա,- բայց չեն գործում: Պատճառն այն է, որ ջրի սակագինը 180 դրամ է մեկ խորանարդ մետրի համար: Սա բավական է մաքուր խմելու ջուր մատակարարելու, բայց ոչ կեղտաջրերի մաքրման համար»:

Ծրագրի շնորհիվ այսուհետեւ կեղտաջրերը մեխանիկական մաքրման կենթարկվեն: Ֆիլտրերի միջոցով դրանցից կմաքրվեն կոշտ աղբը, յուղը եւ ավազը: «Այս փուլում,- ասում է Մելքոնյանը,- կենսաբանական մաքրում չի նախատեսվում, չնայած նորակառույց մաքրման կայանները դա հետագայում իրականացնելու հնարավորություն են տալիս»:

Այս ծրագիրը մաս է կազմում տարածաշրջանային մի նախաձեռնության, որն աջակցում է Ինտեգրացված ջրային ռեսուրսների կառավարմանը (ԻՋՌԿ), որը ԵՄ Ջրային նախաձեռնության հիմնական նպատակն է: ԵՄ Ջրային նախաձեռնությունը մեկնարկել է 2002թ.-ին՝ գործընկեր երկրների կարողությունների ամրապնդման եւ նրանց հետ պարտավորությունների վերահաստատման նպատակով: Տարածաշրջանային այս ծրագիրը, որում ներառված են Հայաստանը, Վրաստանը եւ Ուկրաինան, ԵՄ եւ ՎԶԵԲ կողմից 10 մլն եվրո համատեղ ներդրում է՝ ջրամատակարարման եւ ջրահեռացման ոլորտում, նաեւ ջրային կառավարման, կարողությունների զարգացման եւ իրազեկման ոլորտի բարելավման ուղղությամբ կատարված աշխատանքների համար:

## Սեւանի մաքուր ու գեղեցիկ կապույտ աչքերը

«Այսօր մեր ցանցը վերանորոգված ու կարգավորված է,- ասում է Միքայել Պողոսյանը,- կեղտաջրերի հեռացումը որոշակիորեն բարելավվել է, եւ ջրերը խողովակներով են հոսում՝ ինչպես բոլոր նորմալ քաղաքներում»:

«Հայաստանի անկախացումից հետո կոյուղին շատ հաճախ էր խցանվում,- ասում է 38-ամյա Շուշան Մելիքյանը,- բայց այսօր մենք այդ խնդրին էլ չենք առնչվում»: «Ես երկու երեխա ունեմ, ովքեր շատ են սիրում լողալ եւ ամբողջ ամառ լճից դուրս չեն գալիս»,- ավելացնում է Մելիքյանը: «Այսօր ես զգում ու հավատում եմ, որ իշխանությունները անհանգստացած են աղտոտման խնդրով, եւ որ կան կազմակերպություններ եւ հաստատություններ, որոնք միասին աշխատում են՝ մաքուր պահելու մեր լիճը»: «Շատ օտարերկրյա զբոսաշրջիկներ են այցելում Հայաստան,- եզրակացնում է նա,- եւ լավ կլիներ, եթե Սեւանը իր հյուրերին նայեր մաքուր ու գեղեցիկ կապույտ աչքերով»:

### Մեջբերումներ

«Իսկ Հայաստանի կառավարությունը ցանկանում էր կրճատել աղտոտումը եւ պաշտպանել լիճը: Դա անելու համար մենք ստիպված էինք աշխատել երկու ճակատներով. ցանց՝ կեղտաջրերը հավաքելու եւ կայաններ՝ այդ կեղտաջրերը մաքրելու համար»:

«Մենք օգտագործեցինք նաեւ ծրագրի իրականացման ժամանակ ձեռք բերված խնայողությունները՝ ներառելու 10.000-ով ավելի շատ մարդ, քան սկզբում էր նախատեսված կոյուղու ցանցի համար: Մենք սա կարող ենք համարել իրական հաջողություն»:

«Այս լիճը մեր հարստությունն է, եւ մենք պետք է այն աչքի լույսի պես պահենք»:

Սեւանա լճի ավազանի բնապահպանական ծրագիրը Հայաստանում, որը համատեղ ֆինանսավորվում է Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) կողմից, աջակցում է կեղտաջրերի մաքրման բարելավման ծրագրին՝ կրճատելու այն կեղտաջրերի քանակը, որոնք թափվում են Սեւանա լճի ավազան: Այն օգնում է ֆինանսավորելու երեք կեղտաջրերի մաքրման կայաններ եւ վերանորոգելու Սեւանա լճի մերձակայքում գտնվող հինգ քաղաքների կոյուղիները:

# «ՎիվաՍել-ՄՏՍ»-ը՝ «Նոր անուններ» միջազգային փառատոնի հովանավոր

«ՎիվաՍել-ՄՏՍ»-ը ուրախ է տեղեկացնել, որ կայացավ «Նոր անուններ» պատանի երաժիշտ-կատարողների 2-րդ միջազգային փառատոնի բացումը: Արդեն երկրորդ տարին փառատոնի գլխավոր հովանավորն է «ՎիվաՍել-ՄՏՍ»-ը:

«Արվեստում կարեւոր է առնչումը նոր երեւույթի, նոր անունների հետ: Հովանավորելով «Նոր անուններ» փառատոնը՝ «ՎիվաՍել-ՄՏՍ»-ը վերահաստատում է իր մտադրությունն ու հաստատակամությունը՝ օգնել պատանի հայ կատարողներին, խրախուսել նրանց աշխատասիրությունը, սերն ու նվիրումն արվեստին: Փառատոնը թույլ է տալիս բեմը տրամադրել պատանիներին՝ նրանց կատարողական հնարավորություններն ու կարողությունները բացահայտելու եւ զարգացնելու համար: Դա հատկապես կարեւոր է կատարողական արվեստում, որտեղ նորն արագ ու հեշտ չի ձեւավորվում: Դրա համար տարիներ են պետք, մեծ ու քրտնաջան աշխատանք: Պետք է հուսալ, որ այս պատանիներից մի քանիսը կկարողանան աղագայում անջնջելի էջեր գրել արվեստի պատմության մեջ»,- նշել է «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

«Հայաստանի նոր անուններ» ծրագիրը (ղեկավար՝ «Մշակույթի գործիչների ընկերակցության» նախագահ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Սիլվա Մեքինյան) ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ 2012թ. մայիսի 29-ից հունիսի 1-ը Երեւանում կիրականացնի «Նոր անուններ» պատանի երաժիշտ-կատարողների 2-րդ միջազգային փառատոնը:



Այս տարի փառատոնին մասնակցելու են հրավիրված մինչեւ 18 տարեկան շուրջ քառասուն շնորհալի պատանի երաժիշտներ աշխարհի տարբեր երկրներից (Հայաստան, Վրաստան, Ֆրանսիա, Ռուսաստան, Մալթա, Ուզբեկստան, Կորեա), ովքեր երեւանյան ունկնդրին կներկայանան ինչպես նվագախմբային, այնպես էլ մենանվագ կատարումներով: «Նոր անունների» այս տարվա մասնակիցների թիվը շուրջ մեկ տասնյակով ավելի է մեկնարկային տարվա մասնակիցների քանակից: Տարբերվում է նաեւ աշխարհագրությունը:

Համերգները կկայանան Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ Էդուարդ Թոփչյան) եւ Հայաստանի պետական կամերային նվագախմբերի (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ Վահան Մարտիրոսյան) հետ համագործակցությամբ: Մասնակիցների մեծ մասը միջազգային եւ հանրապետական մրցույթների ու փառատոների բազմակի դափնեկիրներ եւ տարբեր հիմնադրամների կրթաթոշակառուներ են, ովքեր բազմիցս ելույթներ են ունեցել աշխարհի հայտնի բեմերում:

Փառատոնային օրակարգը կներառի նաեւ մասնակիցների համար մշակութային ծրագիր (այցելություններ Երեւանի կարեւորագույն մշակութային հուշարձաններ, զբոսանք Սեւանա լճում, այց Մայր Աթոռ Սբ. Էջմիածին), որը պատանի երաժիշտներին թույլ կտա ոչ միայն առավել մտերմանալ, այլեւ օտարազգի մասնակիցներին կներկայացնի Հայաստանը եւ հայ մշակույթը: